

**«ԱԼՄԱՍ» ԲԲԸ
2008Թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

- 1) Թողարկողի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է թողարկողը: Այս նկարագիրը պետք է հավասարակշռված և համակողմանի վերլուծության ենթարկի թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը: Վերլուծությունները պետք է հնարավորություն տան պատկերացում կազմել թողարկողի ընդհանուր վիճակի, բիզնեսի արդյունքների և զարգացման մասին՝ ներառելով թողարկողի բիզնեսին յուրահատուկ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը ավաստային գործիքների արտադրությունն է: Դրանցից են քար կտրող, հղկող, ապակի կտրող գործիքները: Մանրածախ գներով հաշվարկի դեպքում 2008 թ. ընթացքում արտադրվել է 87,443,000 դրամի արտադրանք: Արտադրության հումքը (մետաղ, օլոֆ, պղինձ և այլն) Ընկերությունը ձեռք է բերում Ռուսաստանի Դաշնությունից: Հումքի ձեռքբերման գները 2008 թ. ընթացքում կայուն են եղել: Իրացումը հիմնականում լինում է տեղական շուկայում, չնայած 2008 թ. ընթացքում մոտ 12 մլն. դրամի արտադրանք արտահանվել է (մեծամասամբ Ռուսաստանի Դաշնություն): Ընկերությունում առկա արտադրանքի մնացորդը 2008 թ. սկզբի և վերջի դրությամբ բերված է աղյուսակում.

Աղյուսակ 1

«Ավաստ» ԲԲԸ-ում առկա արտադրանքի մնացորդը (դրամ)

	Պահեստում	Խանութում
2008 թ. սկիզբ	360,550,000	0
2008 թ. վերջ	367,763,000	11,215,000

Աղյուսակ 2

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2008 թ.

Ցուցանիշ	Հազ. դրամ
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-84034
Իրացման ծախսեր	-2250
Վարչական ծախսեր	-52454
Գործառնական գործունեությունից շահույթ	-23829
Այլ գործառնություններից շահույթ	8905
Այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթ	-2102
2008թ. գուտ շահույթ	-18628
Հիմնական միջոցները 01.01.2009թ.	958736
Կանոնադրական կապիտալը	418217
Դեբիտորական պարտք	15486
Կրեդիտորական պարտք	1062954

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	01.01.2009 թ.
Չուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	-69.625
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	-0.028
Ակտիվների շահութաբերություն (ROA)	-0.011
Չուտ շահույթի մարժա (NPM)	-0.162
Կապիտալի համարժեքության գործակից	0.378
Ֆինանսական կախվածության գործակից	1.646
Բացարձակ իրացվելության գործակից	0.012
Ընթացիկ իրացվելության գործակից	0.737
Ընդհանուր իրացվելության գործակից	25.763
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	8.925
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	40.896
Պաշարների շրջանառելիության գործակից	-1479.000
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	-2940.073
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	-0.079
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	-4629.830

Ընկերության գործունեության հետ կապված հիմնական ռիսկը կամ, ավելի ճիշտ կլինի ասել, անորոշությունը, պայմանավորված է ԱՄՆ դոլարի կուրսի հետ: Այս տարվա դոլարի կուրսի փոփոխությամբ պայմանավորված արդեն իսկ թանկացել են ձեռքբերվող հումքի գները:

2) Այն կարևոր դեպքերի նկարագիրը, որոնք տեղի են ունեցել հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև զեկույցը պատրաստելու օրը: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

Ընկերության կարծիքով կարևոր դեպքերը բացակայում են:

Վերջին երեք տարիների ընթացքում Ընկերությունը շահութաբաժիններ չի վճարել:

3) Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը:

Ներկայիս համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում զարգացման նոր ծրագրերի և հեռանկարների վերաբերյալ կանխատեսումներ հնարավոր չէ անել: Սակայն նշենք, որ զեկույցը կազմելու պահի դրությամբ Ռուսաստանի Դաշնությունից պատվերներ չկան, իսկ տեղական պատվերները անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են: Մինևույն ժամանակ Իրանի Իսլամական Հանրապետությունից փետրվար-մարտ ամիսներին եղել են պատվերներ և նշված ամիսներին արտահանվել է համապատասխանաբար 3,335,000 դրամի և 4,890,000 դրամի արտադրանք: